Տարոն Սիմոնյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԻՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մենք սիրում ենք հաճախ կրկնել, որ իրավունքը հասարակության սոցիալ-պատմական զարգացման արդյունք է: Այնուհետև, իրավաբանական գիտությամբ զբաղվողներս ամբողջությամբ տարվում ենք արդեն բյուրեղացած իրավունքի հետազոտությամբ, սակայն այդ բնորոշման մեջ բաց ենք թողնում մեկ կարևոր հանգամանք. իրավագիտությունը պետք է զբաղվի ոչ միայն այդ ինչ-որ գործընթացի արդյունքով, այլ նաև այն գործընթացներով, որոնց արդյունքում բղուրեղանում է այդ սոցիալական երևույթը և կոչվում իրավունք: Այլ կերպ ասած՝ պետք է հետազոտել ոչ միայն կաղապարված արդյունքը, այլ նաև այն ամորֆ, փոփոխվող «նյութը», գործընթացը, պատասխանել հարցին՝ որն է այդ սոցիալ-պատմական զարգացումը, ինչ գործընթացներ են ընկած այդ զարգացման հիմքում, կառուցվածքային ինչ կառուցակարգերով է այն զարգանում, զարգացման որ արագություններից ինչ հետևանքներ կարող են լինել դրա արդյունքի՝ իրավունքի համար, ի վերջո զարգացման ներքին կառուցվածքային առանձնահատկություններն ինչ կերպ կարող են ազդել վերջնական արդյունքի՝ իրավունքի վրա:

Սա նշանակում է, որ 21-րդ դարի իրավագիտությունը պետք է կարողանա պատկերացնել և ներառել ոչ միայն որոշակի գործընթացի վերջնական, արդեն բյուրեղացած արդյունքի՝ պոզիտիվացված կամ սովորութային իրավունքի գիտությունը, այլ նաև մինչև դրա բյուրեղանալը ընկած գործընթացների, հենց այդ նույն ձևավորման, այդ թվում նաև՝ պատահական և կանխատեսելի գործոնների միաժամանակյա ազդեցությամբ գոյություն ունեցող սոցիալ-իրավական զարգացումների գիտությունը, ինչն էլ ընկած է իրավունքի սիներգետիկայի հայեցակարգի հետազոտության հիմքում:

Վերջին տասնամյակներում սոցիալական կյանքում տեղի ունեցող գերարագ, պարբերաբար արագացող և խորը փոփոխություններն ու համակարգային զարգացումները ստեղծում են մի իրավիճակ, որտեղ ապագա սոցիալ-քաղաքական և պետաիրավական ի-

ռականության հիմքերի ձևավորումը ոչ թե հաջորդում է արագացող և խորը փոփոխություններին, այլ տեղի է ունենում դրանց զուգընթաց:

Սրանից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում ձևավորել այն տեսական հիմքերը, որոնց օգնությամբ կարելի կլինի և՝ գիտակցել ընթացող գործընթացների ներքին կառուցվածքային, տարածական և ժամանակային դրսևորումների առանձնահատկությունները, և՝ ձևավորել հավանական զարգացումների կամ ճյուղավորման պատկերը, և՝ առավել զգայունության հնարավոր կետերը հայտնաբերելով՝ ազդել գործընթացների վրա՝ ակնկալելով ցանկալի արդյունքներ:

Սոցիալական գիտություններում, այդ թվում՝ սոցիոլոգիայում, քաղաքագիտությունում և իրավագիտությունում բավական հաստատուն քայլերով զարգանում է մի նոր մեթոդաբանություն և հայեցակարգ, որը, նոր լինելով հանդերձ, ըստ էության, իրենից ներկայացնում է նախկին մեթոդաբանությունների լրացում, ինչն էլ շատ դեպքերում այնքան է զարգացում ապրում, որ երբեմն կարողանում է հանդես գալ որպես առանձին հարացույց:

Ժամանակակից տեսաիրավական գիտությունը առանձնանում է մեթոդաբանական բազմազանությամբ: Փիլիսոփայության ճանաչողական ավանդական մեթոդներին զուգահեռ (դիալեկտիկա, համակարգային վերլուծություն և այլն) համեմատաբար փիլիսոփայական նոր մոտեցումների օգտագործումը (սիներգետիկա, կառուցվածքաբանություն, հերմենևտիկա) թույլ է տալիս զանազան իրավական երևույթների և գործընթացների ոլորտում գիտական ճանաչողությանը տալ ավելի շատ դինամիկա[1]: Այս բնագավառում բոլոր իրավագետները չեն, որ միակարծիք են սիներգետիկ մեթոդաբանության կիրառման նպատակահարմարության հարցում, սակայն պետք է փաստել, որ արդի պետականագիտական և իրավագիտական շատ խնդիրներ դեռևս չեն ստանում գիտական հիմնավորված լուծումներ: Պատճառներից մեկը, կարծում ենք, դրանց հետազոտումն է դասական մեթոդներով, որոնք, իհարկե, անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար՝ համալիր էություն ունեցող երևույթները օբյեկտիվ հետազոտելու համար:

---

[1] Տե՛ս М.Г. Тирских, *Право как обьект применения синергетических методов,* Юридический журнал, No 2 (28) (апрель — июнь) 2007, Институт законодательства и правовой информации Иркутской области, էջ 4:

Սիներգետիկայի ճանաչողական մոտեցումների կիրառման նշանակությունն իրավագիտության մեջ ընդգծվում է իրավական ճանաչողության ճգնաժամի մեթոդաբանական լուծմամբ՝ հիմք ընդունելով մի քանի մոտեցումների համադրումը: Իսկ սիներգետիկան, որը ամերիկյան դոկտրինում ավելի հայտնի է «համալիրության տեսություն» անվանմամբ, «սահմանում է իրավական տեսության այդ նոր հարացույցի համար անալոգիական (համաբաանական) հիմք»[1]:

Ճշմարիտ է, որ «*իրավական օբյեկտներն այսուհետ չեն կարող ուսումնասիրվել այլ գիտություններից, հասարակական զարգացումից մեկուսացված վիճակում*»[2]: Եվ ինչպես իրավացիորեն նշում է Վենգերովը. «*Պետության և իրավունքի տեսությունը աստիճանաբար ներքաշել է նաև ինքնակամ, ինքնակազմակերպվող և պատահական գործընթացների վերաբերյալ ձևավորող նոր գիտությունից՝ սիներգետիկայից եկող մեթոդաբանությունը: Այս մեթոդաբանական գաղափարները թույլ են են տալիս ավելի լավ հասկանալ պետաիրավական ոլորտում, հատկապես տեղական ինքնակառավարման մեջ դեմոկրատական սկզբունքների զարգացման մեջ և գործադիր իշխանության կառուցվածքում ինքնակառավարման և կառավարման գործընթացները: Հասարակական զարգացման մեջ պատահականության կառուցողական դերի նոր տվյալները առավել խորն են բացատրում հասարակության պետաիրավական կյանքում սուբյեկտիվ գործոնը, թույլ են տալիս պատճառահետևանքային կապերի հետ մեկտեղ հաշվի առնել նաև պատահական և հնարավոր կապերը*»[3]: Եվ, մեր կարծիքով, մեթոդաբանական բազմակարծության պայմաններում այս նոր մեթոդաբանական մշակումները կարող են դիտարկվել որպես հիմնական, անկյունային ուղենիշներ միջառարկայական երկխոսության համար: Մյուս կողմից այս ոլորտում կարելի է նկատել նաև մեկ այլ կարևոր առաջընթաց քայլ. այս նոր հայեցակարգը կարողանում է տեսանելի դարձնել ինքնակազմակերպվող համակարգում, այդ թվում՝ հասարակական համակարգում,

---

[1] Ruhl. J. B., Complexity theory as a paragidm for the dynamical law-and-society system: A wake-up call for legal reductionism and the modern administrative state, Duke Law Journal, volume 45, 1996a, 849-928, էջ 906:

[2] Д. А. Керимов, Методология права, Предмет, Функции, Проблемы, Философии Права, Москва 2008, էջ 244:

[3] Теория государства и права. Ч. 1. Теория государства/ Под ред. А. Б. Венгерова, Москва, 1996, էջ 18:

մարդու դերը, ով, լինելով համալիր համակարգի բաղկացուցիչ մասը և հնարավորություն ունենալով էմպիրիկ փորձը համատեղել տեսական վերլուծության արդյունքների հետ, կարող է անմիջականորեն ազդել այդ համակարգի, ինչպես նաև այդ համակարգից սնուցվող այլ համակարգերի զարգացումների և հնարավոր ճյուղավորումների (բիֆուրկացիաների) ընտրության վրա, քանի որ «սուբյեկտը ինքնակազմակերպվող իրականության որակապես որոշակիացված միջոցն է»[1]:

Ընդհանրացնելով այս մեթոդաբանության կամ հայեցակարգի ամփոփ նկարագիրը՝ կարելի է նշել, որ այն բացում է սոցիալ-իրավական հետազոտությունների նոր հարացույց: Օնթոլոգիական կամ կեցութաբանական իմաստով այն կարևոր և անհրաժեշտ է սոցիալ-իրավական «արտադրության» հիմքում ընկած նյութական գործընթացները ընդգծելու կամ ընդհանրապես՝ գիտակցելու համար, քանի որ այն թույլ է տալիս հասկանալ հավասարակշռությունից հեռու գտնվող ոչ գծային, դինամիկ համակարգերի ներքին և արտաքին համալիր գործընթացները և ձևավորվող երևույթի ձևավորման ու վարքագծի պատկերը և էությունը, ինչպիսի երևույթ էլ այն լինի՝ հասարակություն կամ հասարակական առանձին երևույթ. օրինակ՝ իրավունք կամ պետություն: Էմպիրիկ իմաստով այն կարևոր է՝ ձևավորման հայեցակարգի, ինքնակազմակերպման և բարդ հարմարվողական համալիրների համար, որոնք կարող են օգտագործվել էմպիրիկ հետազոտության, համալիր տվյալների ամբողջության ուսումնասիրման և սոցիալ-իրավական բարեփոխումների ու ոլորտում նորարարությունների համար, իսկ էպիստեմոլոգիական կամ գիտաբանության իմաստով՝ իրավունքի տեսքը, պատկերը խնդրո առարկա դարձնելու, իրավականության գաղափարի ընդարձակման և նոր իրավականության ձևավորման համար՝ մեր գիտական մտքում կառուցելով նոր մակարդակի մտածողություն: Սակայն այստեղ կարևորն այն է, որ «կիզակետը ոչ թե հետազոտության ներքո գտնվող խնդրի համար փաստացի լուծումների հայտնաբերումն է, այլ դրա ակտիվությունը կամ գործունեության խնդրայնությունը և դրա խնդրահարույց տարածությունը հետազոտելը»[2]:

---

[1] Аршинов В. И., Синергетика времени // Синергетика времени.— М.: Репроникс, 2007, էջ 16:

[2] Jamie Murray, Complexity Theory & Socio-Legal Studies, Liverpool Law Rev (2008) 29:227–246, էջ 237:

Այնուամենայնիվ, այս ամենն ավելի լավ պատկերացնելու, նոր մեթոդաբանության կամ հարացույցի առաքելությունը առավել խորը գիտակցելու համար անհրաժեշտ է հասկանալ դրա ձևավորման նախադրյալները, հատկապես՝ պատմահրավական նախադրյալներն ու քայլերը: Այդ խնդիրը լուծելու համար պետք է շրջվել դեպի գիտաբանությունը կամ էպիստեմալոգիան, որը մեզ հուշում է, որ գիտությունն ինքնին անցել է զարգացման որոշ փուլեր: Ի դեպ, ընդհանուր գիտության զարգացման հիմնական քաշող ուժը բնական գիտություններն են եղել, որոնք մշակել են օբյեկտիվ իրականության հետազոտման որոշակի նոր մոտեցումներ ու մեթոդներ, իսկ այնուհետև՝ դրանք փոխանցել հասարակական գիտություններին՝ ապահովելով վերջիններիս զարգացումը: Սակայն գիտության զարգացումը որոշակի փուլերի բաժանելը, ինքնին բացարձակ քայլ չէ, այլ պայմանական քայլ: Համաձայն այդ պայմանական քայլի էլ՝ գիտության զարգացումը բաժանում ենք երեք փուլերի[1]՝ դասական (մեխանիստական կամ դետերմինիզմ), ոչ դասական (քվանտո-ռելյատիվիստական) և հետ-ոչ-դասական (համալիր մտածողություն):

Առաջին փուլ: Մինչև 20-րդ դարի սկիզբները դասական գիտության հարացույցը պնդում էր, որ ցանկացած համակարգի կազմակերպումը (լինի դա ֆիզիկական, թե հասարակական) հնարավոր է միայն կազմակերպվածությունից. այլ կերպ ասած՝ մի կարգը ծագում է մեկ այլ կարգից: Իսկ այն հարցը, թե որտեղից է առաջանում ինքնին կարգը, դասական գիտությունն անպատասխան էր թողնում: Դասական գիտությունը հիմնականում հիմնվում էր դեկարտյան դետերմինիզմի և նյուտոնյան մեխանիստական աշխարհընկալման վրա, ինչը այդ ժամանակի համար կարողանում էր տալ օբյեկտով իրականության, այդ թվում՝ սոցիալ-իրավական իրականության բավարարող պատկերը: Սակայն, բնական է, որ այն չէր կարող միևնույնը մնալ և գտնվում էր զարգացման ընթացքում: Չնայած պիտի նկատել նաև, որ գիտության և հատկապես իրավագիտության զարգացման այս փուլում արդեն իսկ առկա էին համալիրության աշխարհայացքի կամ սիներգետիկայի հարացույցի ձևավորման նախադրյալները: Դեռևս 18-րդ դարում Շ.Լ. Մոնտեսքյոն իր «Օրենքների ոգին» աշխատանքում օբյեկտիվ իրականության համալիրության

[1] Моисеева И. Ю., Концепция самоорганизации в контексте постнеклассической парадигмы, Оренбургский государственный университет, Вестник, ОГУ, 11/2005, էջ 83:

գիտակցման ուղղությամբ բավականին մեծ քայլեր է կատարում: Հասկանալով սոցիալ-իրավական երևույթների փոխկապվածությունն ու այդ փոխկապվածության դերը այդ նույն երևույթների շարժընթացում՝ նա փորձում է դուրս բերել որոշ օրինաչափություններ: Դրանց հիման վրա նա պնդում էր, որ մասնավոր դեպքերն ինքնըստինքյան ենթարկվում են այդ օրինաչափություններին, և որ «յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը հոսում է դրանցից՝ որպես հետևանք», իսկ այդ սկզբունքները կամ օրինաչափությունները բխում են իրերի բնույթից: Նա առաջիններից մեկն էր, ով նկատեց մի շատ կարևոր հանգամանք. ժողովրդի, հասարակության բարոյական, իրավական և ընդհանրապես՝ սոցիալական նորմերի ձևավորման վրա, հասարակության քաղաքականապես կազմակերպման վրա ազդում է ոչ թե միայն ինչ-որ ուժ, կամք՝ լինի դա աստվածային, քաղաքական կամ այլ տեսակի, այլ բազմաթիվ գործոններ՝ տարանջատելով դրանք ֆիզիկականի և բարոյականի: Ֆիզիկականի մեջ ներառում էր հասարակության կեցութավայրի աշխարհագրական դիրքը, կլիման, ընդերքի վիճակը, երկրի չափսերը և դիրքը, բնակչության քանակը և այլն՝ սրանով իսկ, ըստ էության դառնալով աշխարհագրական դետերմինիզմի հիմնադիրը, իսկ բարոյականի մեջ ներառում էր քաղաքական կազմակերպության սկզբունքը, կրոնական հավատամքները, բարոյական համոզմունքները, սովորությունները և այլն[1]: Միևնույն ժամանակ նշում էր, որ այս բոլոր գործոնները գտնվում են անընդհատ փոխներգործության մեջ: Ավելի ազդեցիկ էր համարում օբյեկտիվ, ֆիզիկական գործոնները, սակայն միևնույն ժամանկ պնդում էր, որ սուբյեկտիվ կամ բարոյական գործոնները ի վիճակի են իրենց զարգացվածությամբ ազդելու և վերափոխելու կամ վերացնելու օբյեկտիվ գործոնների թողած հետևանքները կամ նվազեցնելու դրանց ազդեցությունը: Այնուհետև համակարգային հետազոտությունների բնագավառում իր հիմնարար խոսքը ասաց Հ. Հեգելը, ով իր դիալեկտիկական մեթոդաբանությամբ կարողացավ համապարփակ կերպով ներկայացնել սովորական պայմաններում համակարգերի զարգացման հիմնարար օրինաչափությունները՝ օգտագործելով մինչև իր ժամանակները՝ դեռևս Հերակլիտի կողմից առաջ քաշած զարգացման հիմնական սկզբունքները: Այս տեսությունը իր հիմնարարությամբ դարձավ ա-

[1] Տե՛ս Օ.Է. Лейст, История политических и правовых учений, Москва, 2002, էջ 322:

վանդական, և կանտականության հետ միասին հեգելականությունը ընկավ հետագայում կատարվող սոցիալ-իրավական գրեթե բոլոր համակարգային հետազոտությունների հիմքում: Սակայն այստեղ ևս եղան խնդիրներ, որոնք ավանդական մոտեցումը չկարողացավ լուծել կամ անգամ նկատել: Այս ավանդական տեսությունը (ներառյալ Կ. Մարքսի մատերալիստական դիալեկտիկական հայեցակարգը) զարգացումը դիտարկում էր որպես մի կարգից մյուսին անցնելու ընթացք: Քաոսը կա՛մ ընդհանրապես հաշվի չէր առնվում, կա՛մ դիտարկվում էր մի տեսակի կարգից մյուսին (սովորաբար ավելի բարդ) անցման ինչ-որ կողմնակի և հետևաբար՝ ոչ էական արդյունք[1]:

Հետաքրքրական է, որ «բևեռային հայեցակարգերի և բազմաթիվ հակասություններ առաջացնող հեգելյան հսկա համակարգում կա ամեն ինչ՝ բացի կարգի և քաոսի հակասությունից: Այս տեսանկյունից սիներգետիկան չի համարվում զարգացման հին տեսության տեղափոխումը նոր լեզվի, այլ իրենից ներկայացնում է հեռու գնացող զարգացում և ընդհանրացում»[2]: Հեգելականությունը և դիալեկտիկան համալիր համակարգերի հետազոտության կարևոր, սակայն ոչ բավարար մեթոդաբանություն էր, ուստի այն պետք է դիտարկել որպես համալիրության կամ սիներգետիկայի հարացույցի ձևավորման կարևորագույն նախադրյալներից:

Ոլորտի մտածողները հաճախ են վիճում այն հարցի շուրջ, թե դիալեկտիկան և սիներգետիկան մեկը մյուսին հակասո՞ղ, թե՞ փոխլրացնող հայեցակարգեր են: Այս խնդիրը մի առանձին քննարկման թեմա է, սակայն ընդհանուր գծերով կարելի է նշել, որ սիներգետիկան չի բացառում դիալեկտիկայի կիրառումը համակարգային հետազոտությունների ընթացքում, այլ հետազոտողը ստիպված է լինում կիրառել սիներգետիկայի հարացույցի և մեթոդաբանության հնարավորություններն այն ժամանակ, երբ դիալաեկտիկան այլս չի կարողանում համապարփակ ներկայացնել համակարգի զարգացման էությունը, քանի որ համակարգը մտել է անկայունության և ոչ գծային զարգացումների փուլ կամ, կարելի է ասել, մտել է արագացող փոփոխությունների մի գործընթացի մեջ, որի զարգացման ուղ-

---

[1] Карери Д., Порядок и беспорядок в структуре материи. М., 1985, էջ 13, 159:

[2] В. П. Бранский, Социальная синергетика как постмодернистская философия истории, Общественные науки и современность 1999, # 6, էջ 117:

ղությունը կանխատեսելը դարձել է անհնար կամ դժվար տեսանելի՝ պատահական գործոնների ազդեցության շնորհիվ: Այս ոլորտում կարևոր է նաև մեկ այլ խոշորագույն մտածողի կողմից մշակված մեթոդաբանությունը և աշխարհընկալումը: Խոսքը վերաբերում է դրապաշտության (պոզիտիվիզմի) և սոցիոլոգիայի հիմնադիր Օգյուստ Կոնտին, ով 19-րդ դարում առաջիններից մեկը հանգեց այն մտքին, որ բնական գիտությունների՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մեխանիկայի առաջընթացը նորովի էր դնում բոլոր գիտությունների կապը փիլիսոփայության հետ և դրանց ընդհանուր ազդեցությունը մարդկանց տնտեսական և հասարակական այլ գործունեությունների վրա: Նա ընդգծում էր հասարակական գիտությունների զարգացման գործում բնական գիտությունների առաքելությունը՝ միևնույն ժամանակ նշելով, որ մարդկային պատմությունը մարդու բանականության ձևավորման և զարգացման ընթացքն է[1]: Ստեղծելով պոզիտիվիզմի հսկայական ուսմունք, անգամ դրանից կերտելով նոր համաշխարհային պոզիտիվիստական կրոնի ծրագիր, դնելով մի նոր գիտության՝ սոցիոլոգիայի հիմքերը և մատնանշելով սոցիալական դինամիկայի առանձնահատկությունները, և այդ ամենը կառուցելով մաթեմատիկական և բնագիտական հիմքերի վրա՝ Կոնտը, այնուամենայնիվ, այս ամենը ներկայացնում է աշխարհի մեխանիստական պատկերում՝ օգտագործելով գիտության դեկարտյան դետերմինիզմը՝ նշելով, որ զարգացումը՝ ընդհանրապես, և սոցիալական գիտության զարգացումը՝ մասնավորապես, հնարավոր է միայն հստակ մաթեմատիկական հաշվարկների, էմպիրիկ (փորձարարական) դիտարկումների և համակարգային կարգավորվածության շնորհիվ: Իսկ իր ուսմունքի կարգախոսը դարձնում է «Կարգ և առաջընթաց» խոսքը, ինչը գրված է նաև Բրազիլիայի Հանրապետության դրոշի վրա, քանի որ այդ պետությունը Կոնտի պոզիտիվիստական փիլիսոփայությունը և սոցիոկրատիան 19-րդ դարում հռչակել էր որպես պետական գաղափարախոսություն:

Ընդհանուր առմամբ այս բոլոր մտածողներն էլ կարգի և անկարգավորվածության ոլորտում իրենց դիտարկումներում ելնում էին աշխարհի մեխանիստական պատկերից, այլ կերպ՝ դեկարտյան դետերմինիզի և նյուտոնյան մեխանիկայի հայեցակարգերից, սակայն նրանցից յուրաքանչյուրն էլ իր տեսությունը կերտելիս շոշա-

[1] О.Э. Лейст, История политических и правовых учений, Москва, 2002, էջ 432:

փում էր այնպիսի խնդիրներ, դրանց հետ անգամ տալիս էր որոշակի եզրահանգումներ, որոնք հետագայում պիտի ընկնեին սիներգետիկայի կամ համալիր համակարգերի տեսության հիմքում և նախադրյալ հանդիսանային դրա ձևավորման համար: Օրինակ՝ Մոնտեսքյոն և Կոնտը սոցիալ-իրավական երևույթների զարգացումը և ընդհանրապես դրանց առանձնահատկությունները բացահայտելու համար պարտադիր էին համարում միջառարկայական և միջհամակարգային հետազոտությունը՝ պնդելով, որ օբյեկտիվ իրականության մեջ գրեթե չկան գործոններ, որոնք ձեռնպահ մնան սոցիալ-իրավական կոնկրետ երևույթի զարգացման վրա ներգործելուց, և շատ հաճախ առաջին հայացքից աննշան գործոնը (լինի դա աշխարհագրական դիրքի և կլիմայական գործընթացների թե մաթեմատիկական հաշվարկների արդյունք) ի վիճակի է սոցիալ-իրավական կոնկրետ երևույթի վրա իր ներգործությամբ պայմանավորել դրա զարգացման հիմնական ուղին, ընդհանուր պատկերը և ներքին բովանդակությունը: Իսկ Հեգելի կողմից ստեղծված դիալեկտիկական ուսմունքը այն սնուցող հողն է, որի սնուցումից և որի կողմից առանձին հարցերին պատասխան չստանալու հետևանքով է ձևավորվել սիներգետիկան:

Երկրորդ փուլ: Այնուամենայնիվ, գիտությունը առաջ գնաց, և 20-րդ դարում գիտության մեջ տեղի ունեցավ մի շատ կարևոր հեղափոխություն, որն արմատապես փոխեց նյուտոնյան աշխարհի մեխանիստական պատկերը՝ առաջարկելով առավել լայն ու հետաքրքիր թե' բնական և թե' սոցիալական իրականություն:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ սկսեցին փոփոխվել հարացույցերը, որոնց վրա հիմնվել էին ամբողջ 19-րդ դարի գիտությունները: Իսկ երկու համաշխարհային պատերազմների միջև՝ 1920-1930թթ, վերջնականապես ձևավորվեց մեթոդաբանությունը, որը պարունակում է աշխարհի «գլոբալ մոդելը», ինչը բացակայում էր դասական գիտության մեջ: Դրան հիմնականում նպաստեցին բնական գիտություններում կատարված հեղափոխությունները, որոնք սկսվեցին Ալբերտ Այնշտայնի Հատուկ /1905/ և Ընդհանուր /1916/ հարաբերականության տեսություններով և շարունակվեցին քվանտային մեխանիկայի ստեղծմամբ և արագընթաց զարգացմամբ: Բնական գիտություններում տեղի ունեցած հարացույցային փոփոխությունները հետազոտողներին ստիպեցին երևույթները ուսումնասիրել անկախ դիտորդի կարգավիճակով, որը

դուրս է գտնվում ուսումնասիրվող համակարգից, ինչպես նաև ստիպեցին համակարգի, դրա մասնիկների վարքագիծը, կատարվող փոփոխությունները հասկանալ՝ շեշտը դնելով ոչ միայն արտաքին ազդակների, այլև ներքին գործոնների վրա, որոնք էլ համակարգաստեղծ ու վարքագիծը պայմանավորող հիմնական գործոններն են: Այնշտայնի և Նիլս Բորի աշխատանքները ցույց տվեցին, որ աշխարհն ավելի բազմազան է, բարդ, քան այն ներկայանում է աշխարհի մեխանիստական պատկերում: Եվ այս կերպ ստեղծվեց աշխարհի 2-րդ գիտական պատկերը՝ «քվանտո-ռելյատիվիստական» մոդելը կամ «ոչ դասական» գիտությունը:

Հետաքրքրական է, որ օբյեկտի կամ համակարգի նկատմամբ դիտարկման դիրքը, տեսանկյունը փոխելով՝ հետազոտողի առջև բացվում է այդ նույն համակարգի բոլորովին այլ պատկեր թե' տարածության, թե' ժամանակի մեջ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում համակարգի բազմակողմանի, որևէ տեսանկյունով չսահմանափակվող, որևէ մասնիկի յուրահատկությունը չանտեսող տարածաժամանակային ուսումնասիրություն կատարել՝ դրա օբյեկտիվ պատկերը տեսնելու համար: Այս աշխարհայացքի հիման վրա այսօր սիներգետիկան ձևավորել է մի ուրույն սկզբունք, որ պայմանականորեն կոչվում է դիտարկելիության սկզբունք, և որը շատ կարևոր դեր ունի համալի՝ համակարգերի հետազոտության բնագավառում, հատկապես, եթե դրանք գտնվում են անկայուն և արագացող զարգացումների մեջ: Խոսքը վերաբերում է այն սկզբունքին, որը ցույց է տալիս, թե սոցիալ-իրավական իրականության կարգավորվածության և անկարգավորվածության երևույթները դիտարկելիս հետազոտող սուբյեկտը տարածաժամանակային ինչ հարթությունում է գտնվում, դա ինչով է ազդում նրա առջև բացվող պատկերի ուսումնասիրության վրա, և ինչը շատ կարևոր է, ժամանակի ընկալումը ինչպես է տեղի ունենում նրա մոտ: Եթե երևույթների շարժընթացը, հասարակական զարգացումները, ներհասարակական հակասությունները և/կամ համագործակցությունը դանդաղում է դիտորդի համար, ապա ժամանակի ընթացքը նրա համար նույնպես դանդաղում է, եթե տեղի է ունենում արագացում հասարակական երևույթներում, ապա դիտորդի համար ժամանակի ընթացքը արագանում է, և նա շատ հաճախ չի տեսնում և հասկանում երևույթների պատճառահետևանքային կապը, հասարակական զարգացումները

նրա համար ստանում են անկանխատեսելի, տարերային, անկայուն բնույթ, և դրանցում օրինաչափությունները վեր են ածվում պատահականությունների, կարգավորվածությունը՝ քաոսի: Արդյունքում «քաոսը բարդ է թվում այն պատճառով, որովհետև դիտորդը չգիտի, թե որոնք են կանոնները»[1], որոնցով շարժվում է համակարգը: Այս սկզբունքը հաշվի առնելով է, որ սիներգետիկան առաջարկում է օբյեկտը ու այն դիտարկող սուբյեկտին դիտարկել միևնույն մակարդակում, այնպես, որ անկայուն վարքագիծ դրսևորող սոցիալ-պետական համակարգը հետազոտողը մտագործունեության ամբողջ ընթացում հետազոտության տակ է պահում նաև օբյեկտի վերաբերյալ սեփական ընկալում: Այս նոր գիտության մեջ «հետազոտական ծրագիրը ձևավորվում է՝ հիմք ընդունելով այդ միասնական գլոբալ մոդելը, այլ ոչ թե կոնկրետ գիտական օնթոլոգիաների կոնկրետ խնդիրներից: Դասական գիտությունը չի ձգտում կառուցել աշխարհի ամբողջական պատկերը: Աշխարհը նրա համար սկզբունքորեն բաժանված է: Ոչ դասականը ենթադրում է ինչ-որ ընդհանուր պատկեր, որում առանձին գիտությունները և գիտական ուղղությունները խաղում են ընդհանուր խճանկարի առանձին մասերի դեր: Բնական է՝ նման մոտեցումը ստիպում է կառուցել գիտությունների աստիճանակարգություն՝ կախված այն բանից, թե խճանկարի որ մասն է «ծածկում» տվյալ ուղղությունը»[2] :

Սակայն պետք է նշել, որ սոցիալական գիտությունները, այդ թվում՝ իրավագիտությունը չկարողացան ամբողջությամբ օգտագործել այս նոր գիտական հարացույցի մեթոդաբանական բազան, և այն հիմնականում մնաց բնական գիտությունների մենաշնորհը: Թեև առանձին համարձակ հետազոտողներ փորձ արեցին և սոցիալական իրականության բազմազանությունը կարողացան տեսնել մի նոր մակարդակի վրա, որից, առանձին գործոններով ներազդելով այդ նույն սոցիալ-իրավական իրականության կոնկրետ երևույթների վրա, կարողացան փոքր դրվագներում պայմանավորել դրանում ա-

[1] Jack Cohen & Ian Stewart, The Collaps of Chaos, 1994, էջ 197, մեջբերումն ըստ Ruhl. J. B., Complexity theory as a paradigm for the dynamical law-and-society system A wake-up call for legal reductionism and the modern administrative state, Duke Law Journal, Vol. 45, N. 5, March 1996, էջ 876:

[2] Буровский А. М., Постнеклассическая парадигма и гуманитарные науки // Сибирская локальноэтническая культурная ситуация в конце XX века, Материалы Вторых параславянских чтений, 1998, էջ 40-55:

ռաջացող գործընթացների զարգացման ուղղությունները՝ մնալով աննկատ այն հետազոտողների և դիտողների համար, ովքեր չունեցան այդ համարձակությունը: Եվ այդ առանձնահատուկ հմտությունը այդ նույն հետազոտողները սահմանեցին որպես սահմանագիծ իրենց և դեռևս դասական գիտության մենաշնորհային տիրույթում գտնվող հետազոտողների միջև՝ այդ նույն հմտություններին տալով գաղտնիության կամ մետագաղտնիության շղարշ:

Երրորդ փուլ: 20-րդ դարում տեխնիկայի զարգացման և ընդհանրապես՝ բնական գիտությունների արագընթաց զարգացումը համընկավ կամ պայմանավորեց սոցիալ-քաղաքական և պետաիրավական երևույթների արագ փոփոխությունների առաջացմանը:

20-րդ դարի սկզբին սոցիալական հուզումները, հեղափոխական իրադարձությունները, համաշխարհային պատերազմները, խորացող հակասությունները, այլ կերպ ասած՝ արտակարգ իրավիճակները, որոնք իրենցից ներկայացնում էին սոցիալական անկայունություն ծնող և սնուցող աղբյուրներ, կարելի է ասել, առավել սովորական, քան հազվադեպ երևույթներ էին: Եվ այդ արտակարգ իրավիճակների պայմաններում հասարակական հարաբերությունները կարգավորելու կամ ընդհանրապես հասարակությունում ընթացող երևույթները գիտակցելու համար միայն դասական գիտության մեթոդաբանությամբ զինված գիտնականը, օրենսդիրը, կիրառողը, պետական և քաղաքական գործիչները չէին կարողանում որևէ արդյունավետ բան անել, իսկ այդ սոցիալ-քաղաքական անկայունության պայմաններում որևէ արդյունքի հասնողներն էլ հիմնվում էին ոչ թե գիտականորեն հիմնավորված ճիշտ սոցիալական, իրավական, պետական, տնտեսական ռազմավարության վրա, այլ ընդարձակ ռեսուրսների սպառման միջոցով և դրա հաշվին մի նոր, արդեն իրենց համար հասկանալի արտակարգ իրավիճակ ստեղծելու միջոցով փորձում էին վերահսկողության տակ վերցնել համակարգային գործընթացները և դանդաղեցնել դրանց ընթացքը, ինչը, իհարկե, ավելի վտանգավոր արդյունքների էր բերում՝ առաջացնելով առավել բարդ ու համալիր, սոցիալական բազմազան գործոններով փոխներթափանցված անկայունություն, որի կառավարման համար դասական և ոչ դասական գիտություններն այլևս չէին կարողանում ապահովել մեթոդաբանական զինանոց: Այս արտակագ, հավասարակշռությունից հեռացող և անկայունությունում խորացող հասարակա-

կան հարաբերությունների ամբողջությունը հասկանալու, կառավարելու կարգավորելու համար էլ 20-րդ դարի երկրորդ կեսին առաջարկվեց համալիրությունը հասկանալու և կառավարելու մի վարկած (հիպոթեզ), որն արդեն բնական գիտություններում ստացել էր իր գոյության իրավունքը: Խոսքը վերաբերում է սիներգետիկական կամ համալիր համակարգերի տեսության կամ դիսսիպատիվ կառուցվածքների տեսությանը, որն էլ կազմեց գիտության զարգացման երրորդ մակարդակը՝ հետ-ոչ-դասական գիտությունը: Այս նոր գիտությունը ստեղծվեց 20-րդ դարի 60-ական թվականներին ռուսական արմատներով բելգիացի գիտնական Պրիգոժինի կողմից և բավականին զարգացում ապրեց հենց Պրիգոժինյան դպրոցում, այնուհետև տարածվեց ամբողջ աշխարհում, իսկ այժմ արդեն առանց այս նոր հայեցակարգի մեթոդաբանական բազայի անհնար է անկայուն և հավասարակշռությունից հեռու գտնվող համալիր համակարգերի, այդ թվում հասարակական համակարգերի զարգացման առանձնահատկությունները հասկանալ, երբեմն էլ՝ պայմանավորել այդ զարգացումները:

Առաջին հայացքից մի քիչ բարդ և հասարակական գիտությունների, այդ թվում՝ իրավագիտության համար ոչ կիրառելի այս հայեցակարգը իրականում, համեմատած նախորդ մեթոդաբանությունների և հարացույցերի հետ, անփոխարինելի է անկայուն ու դինամիկ զարգացող սոցիալ-քաղաքական իրադարձությունները ճիշտ հասկանալու, երբեմն՝ կանխորոշելու համար, անփոխարինելի է նաև այդ իրավիճակներում իրավունքի զարգացումը, դրա ներքին բովանդակության ընդարձակումը ճիշտ պատկերացնելու և պետական կառավարման համակարգում առավել ճկուն, արագ և դիպուկ որոշումներ ընդունելու համար:

Իրավունքի ձևավորման ոլորտից բերենք ընդամենը մեկ օրինակ, որտեղ տեսանելի կլինի, որ արդեն իսկ կիրառող մարմինը զգում է այս նոր մեթոդաբանության կիրառման անհրաժեշտությունը. ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը «Հյուսիսային ծովի մայրցամաքային ելուստի» վերաբերյալ գործում, երբ փորձում էր հասկանալ սովորութային իրավունքի կոնկրետ նորմի բյուրեղացման աստիճանը, քննարկում է կոնկրետ ոլորտում պետությունների պրակտիկան, իրավական համոզվածությունը՝ opinion juris cive nesesitatis–ը, ինչպես նաև այն ժամանակահատ-

վածը, որի ընթացքում ձևավորվում կամ կարող է ձևավորվել իրավունքը՝ հնարավոր համարելով նաև շատ կարճ ժամանակահատվածում նման նորմի ձևավորումը, եթե գործընթացների արագությունը կամ պարբերականությունը տանում են դրան: Դատարանը այսպիսի հետաքրքիր միտք է արտահայտել. «*Թեպետ կարճ ժամանակահատվածն ի սկզբանե մաքուր պայմանագրային նորմի հիման վրա սովորութային միջազգային իրավունքի նոր նորմի ձևավորման համար անպայմանորեն կամ ինքնին խոչընդոտ չէ, անհրաժեշտ պահանջն է այն, որ խնդրահարույց ժամանակահատվածում, որքան էլ այն կարճ լինի, պետությունների պրակտիկան՝ ներառյալ այն պետություններինը, որոնց շահերը հատկապես շոշափվում են, պետք է լինի ոչ միայն համընդհանուր, այլև գործնականում միատեսակ: Եվ, ավելին, այն պետք է կյանքի կոչվի այնպիսի ձևով, որ ցույց տա իրավունքի նորմի կամ իրավական պարտականության առկայության ընդհանուր ճանաչվածությունը*»[1]: Այստեղ Դատարանը նշում է անգամ չափազանց կարճ ժամանակահատվածում իրավունքի բյուրեղացման հնարավորության մասին՝ թողնելով այդ բյուրեղացման կառուցակարգի, գործընթացներում կառուցվածքների փոփոխելիության, ներքին փոքր ցանցային համակարգերի ձևավորման առանձնահատկությունների հայտնաբերումն ու վերլուծությունը իրավաբան գիտնականներին, իսկ գիտությունը արդեն իսկ մեզ տալիս է հնարավորություն՝ չսահմանափակվել միայն դեկարտյան դետերմինիզմով՝ գիտության դասական հարացույցով, ինչպես նաև ոչ դասական՝ քվանտո-ռելյատիվիստական հարացույցով՝ իր անորոշության սկզբունքով և դիտարկողի առջև բացվող պատկերի հարաբերականությամբ, այլ փոքր ինչ լայն նայել իրականությանը և տեսնել այն, ինչ հնարավոր է տեսնել, երբ օգտագործում ես ավելի մեծ լուսամուտ՝ բազմակողմանի, միջառարկայական և համալիր հետազոտություն կատարելու համար: Իսկ նման հնարավորություն տալիս է համալիր համակարգերի կամ սիներգետիկայի հարացույցը՝ հնարավոր բոլոր գործոնների հնարավոր փոխազդեցությունները հնարավոր տարածական և ժամանակային հարթություններում պատկերելու, գործընթացների հնարավոր ճյուղավորումները գիտակցելու և դրանցից որևէ մեկով համակարգի զարգացման հավանականությու-

[1] North Sea Continental Shelf Case, International Court of Justice, 1969, para. 74, www.icj-cij.org

նը կանխորոշելու համար:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ միգուցե հենց այս հարացույցն է, որ ի վերջո ի վիճակի կլինի սոցիալ-իրավական իրականությունում առաջացող արտակարգ իրավիճակները, անկայունությունները և սոցիալ-քաղաքական անցումները դարձնել ոչ այդքան ցավոտ նույն հասարակության համար, այլ կառավարելի և, ավելին, բեղմնավոր՝ նոր կարգը հաստատելու ճանապարհին, որովհետև ցանկացած անկայունություն ոչ միայն բացասական ազդեցություն է թողնում սոցիումի և պետության վրա, այլ նաև տալիս է հնարավորությունների երբեմն անսահման պաշար:

Taron Simonyan
Candidate of Legal Sciences, Assistant Professor, YSU Chair of Theory and History of State and Law

THE HISTORICAL-LEGAL PRECONDITIONS FOR THE DEVELOPMENT OF THE CONCEPT OF LAW SYNERGETICS

Nowadays the main part of the legal research is devoted to positive and matured laws, but the mechanisms of law emergence in different types, perceptions and various factors making a big, but unforeseen influence upon these processes, in general, are not the subject of research. In these conditions a new pattern in socio-legal research is going to confirm its right to live, that is the synergetic view to legal dynamics, which gives a broader vision and draws the the complex nature and picture of law, basically in its emergence stage. This article tries to show the real preconditions for the development of the view, methodology and paradigm of the synergetics or complex thinking that can be found in the history of political and legal teachings: such as the teachings of Ch. L. Montesquieu, F. Hegel, O. Kont - in classical science, in the new vision of relativity and quantum theoris - in non-classical science, and the complex system theory itself - in post-non-classical science. The existenc of chaotic and unforeseen dynamics in social reality in XX century is also taken as a requirement, as well as precondition for the emergence and development of the synergetic paradigm.